



## **<<ԽՈՍՈՒՄ ԵՆ ՓԱՍՏԵՐԸ, ՀԻՇՈՒՄ ԵՆ ՍԵՐՈՒՆԴՆԵՐԸ>> ԽՈՐԱԳՐՈՎ ՑՈՒՑԱՅԱՅԱՆԴԵՍ ՀՐԱԶԴԱՆԻ ՊԱՏԿԵՐԱՍՐԱՅՈՒՄ**

Հայաստանի Ազգային պատկերասրահի Հրազդանի մասնաճյուղում տեղի է ունեցել <<Խոսում են փաստերը, հիշում են սերունդները>> խորագրով մշակութային ձեռնարկ:

Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի մարզային միջոցառումների ծրագրի շրջանակներում իրականացված այս միջոցառմանը մասնակցել են ՀՀ Կոտայքի մարզպետ Կ. Գուլոյանը, Հրազդանի քաղաքապետ Ա. Դանիելյանը, պաշտոնատար այլ անձինք, ինչպես նաև մտավորականներ: Միջոցառման մեկնարկն ազդարարվել է Հայոց ցեղասպանության պատմական իրողությունների վերաբերյալ համապատասխան բանախոսությամբ:

Պատկերասրահի երկրորդ հարկի ցուցասրահում կազմակերպվել է Արևմտյան Հայաստանի պատմամշակութային հուշարձանների և հայտնի օտարերկրացիների կողմից Հայոց Մեծ եղեռնը դատապարտող հայտարարությունների վավերագրական նյութերի ցուցադրություն:

Այնուհետև Հայաստանի Ազգային պատկերասրահի Հրազդանի մասնաճյուղի առաջին հարկի ցուցասրահում <<Վերածնունդ և ապագա>> խորագրի ներքո կազմակերպվել է մարզի երիտասարդ նկարիչների թեմատիկ ստեղծագործությունների ցուցահանդես, որին ներկայացված են եղել խորհրդանշական 100 աշխատանքներ:

<<Խոսում են փաստերը, հիշում են սերունդները>> խորագրով մշակութային ձեռնարկի ընթացքում հնչել են նաև Հրազդան քաղաքի Խ. Աբովյանի անվան N 1 ավագ դպրոցի <<Ծիլեր>> երգչախմբի կատարումները:

Հրազդանի պատկերասրահում բացված ցուցահանդեսը այցելուներին ներկայանալու է մինչև ապրիլ ամսվա ավարտը: